Ի գիտություն մարզի գյուղացիական տնտեսություն վարողների

Հարգելի վայոցձորցիներ:
Հայտնում ենք, որ 2015 թվականի հունիսի 6-ին և դրան հաջորդող յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում (Կասյան փողոցի վերին հատված) նախատեսվում է կազմակերպել գյուղատնտեսական մթերքների տոնավաճառ: Հայաստանի Հանրապետության մարզերի գյուղացիական տնտեսություններին հնարավորություն կընձեռվի անվճար մասնակցելու տոնավաճառին և Երևան քաղաքի սպառողներին ներկայացնելու բացառապես սեփական արտադրանքը, ինչը կնպաստի արտադրողների և սպառողների համար գյուղատնտեսական մթերքների առավել շահավետ գների ձևավորմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն, հետևյալ հեռախոսահամարով՝ (+374281) 2.30.50: